ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/64

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Աքվա Ստանդարդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Աքվա Ստանդարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Աքվա Ստանդարդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 15.07.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է չեղարկել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 15.07.2021թ.-ին:

16.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/64 համարի ծածկագիրը:

22.07.2021թ.-ին և 06.08.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.08.2021թ.-ին:

2. «Աքվա Ստանդարդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Աքվա Ստանդարդ» ՍՊԸ-ն 15.07.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) 16.03.2021 թվականին հրապարակել է թիվ «ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հայտարարությունը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իր կարիքների համար հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերման նպատակով:

1.2. Պատվիրատուի կողմից՝ իր կարիքների համար հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերման վերաբերյալ գնումների պլանը հաստատվել է 12.05.2021 թվականին և հրապարակվել է 17.05.2021 թվականին:

1.3. Ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՔՎԱ ՍՏԱՆԴԱՐԴ» ՍՊԸ (այսուհեւո նաև՝ Մասնակից):

1.4. Ընթացակարգի շրջանակում պայմանագիր կնքելու առաջարկն ու պայմանագրի նախագիծը Մասնակցին է ուղարկվել 06.07.2021 թվականին և մասնակցի կողմից կնքված պայմանագիրը ներկայացնելու ժամկետ է սահմանվել 10 աշխատանքային օր:

Գնումների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկագիրը՝ սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տփալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...):

Նշված իրավական նորմերի վերլուծությունից պետք է արձանագրել հետևյալը, որ գնման գործընթացի իրավական հիմքը Պատվիրատուի կողմից հաստատված և

հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլանն է, որը կարող է հիմք հանդիսանալ գնման գործընթաց սկսելու, պատասխանատու ստորաբաժանում, գնումների համակարգող և հանձնաժողով ձևավորելու համար: Այլ կերպ ասած, եթե օրենսդրական կարգի պահպանմամբ հրապարակված չէ գնումների պլանը, ապա առկա չէ իրավական հիմքը և Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ և ոչ իրավաչափ է, ուստի ենթակա է չեղարկման:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, Պատվիրատուն գնումների պլանի փոփոխությունը, որում ներառված է Ընթացակարգի ձեռք բերվող ապրանքը հրապարակել է 17.05.2021 թվականին, այսինքն ավելի ուշ քան հրապարկված էր Ընթացակարգի վերաբերյալ գնանշման հարցման հրավերը: Օրենսդրի կողմից սահմանած այն իրավակարգավորումը, որ գնման գործընթաց սկսելու իրավական հիմքը Պատվիրատուի կողմից հաստատված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանն է ինքնանպատակ չէ, այն ուղղված է կարգավորելու Պատվիրատուի գործողությունները գնման ընթացակարգի շրջանակում, այն օրենսդրական կարգին համապատասխան իրականացնելու և հետագայում իրավական խոչընդոտների չբախվելու համար: Սույնով պայմանավորված պետք է փաստել, որ սույն գնման ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, Պատվիրատուի կողմից խախտելով առկա օրենսդրական կարգը, որը իր հերթին հետագայում կհանգեցնի գործարքի անվավերության, այն օրենքի խախտմամբ կնքված լինելու հիմքով:

Չնայած այն հանգամանքին, որ գնման Ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՔՎԱ ՍՏԱՆԴԱՐԴ» ՍՊԸ, սակայն գտնում ենք, որ կնքվելիք գործարքը լինելու է օրենքի խախտմամբ կնքված և իր մեջ պարունակելու է ռիսկեր և հանդիսանալու է անվավեր գործարք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Նշված իրավական նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ կնքվող գործորքները պետք է համապատասխանեն գործող օրենսդրությանը և դրան հակասող գործարքները իրենց անվավերության հիմքով կառաջացնեն կողմերի համար անբարեպաստ

հետևանքներ, թույլ չտալով սատանալ այն արդյունքը, որը կողմերը ակնկալում էին գործարք կնքելիս:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը: Ուստի օրենսդրական կարգի խախտմամբ կնքման ենթակա պայմանագիրը կառաջացնի ինչպես գործարքի անվավերության հիմքեր, այնպես էլ Պատվիրատուի կողմից դրա միակողմանի լուծման, որով պայմանավորված Մասնակիցը կկրի բացասական հետևանքներ, քանզի առանց իրավական հիմքի կազմակերպված Ընթացակարգի շրջանակում հայտերը գնահատող հանձնաժողովը չէր կարող ձևավորվել և կայացներ ընտրված մասնակից ճանաչելու որոշում:»:

Ելնելով վերոգրյալից, «Աքվա Ստանդարդ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ չեղարկել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» գնման ընթացակարգը:

3. <u>«Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.07.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-LO/2/11545-2021 գրությամբ դիմել է «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Աքվա Ստանդարդ» ՍՊԸ-ի կողմից 15.07.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջված փաստաթղթերը և վերջինիս գրավոր դիրքորոշումը:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերման նպատակով 16.03.2021թ.-ին հայտարարվել է «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 12.03.2021թ.-ի թիվ 1 որոշմամբ, իսկ հայտերի բացման նիստի օր է սահմանվել 23.03.2021թ.-ին ժամը 11:00-ն ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 1 հատ հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման սարքավորումը, գումարը նշված է՝ 0 և

որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 42911160:

iv. www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի 16.03.2021թ.-ին հրապարակված 2021 թվականի գնումների պլանի համաձայն՝ Ընթացակարգով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով (42911160/504) ապրանքի համար նախատեսված քանակը նշվել է՝ 0, գումարը՝ 0:

v. «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի 2021 թվականի գնումների փոփոխված պլանում ներառվել է 12.05.2021թ.-ին, որը հրապարակվել է www.gnumner.am կայքում 17.05.2021թ.-ին:

vi. www.gnumner.am կայքում մինչև 16.03.2021թ.-ը առկա տվյալների համաձայն՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հրապարակված 2021 թվականի գնումների պլանի փոփոխության մեջ բացակայում է «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկան՝ համապատասխանաբար սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Աքվա Ստանդարդ» ՍՊԸ-ի կողմից 15.07.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման

ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերման նպատակով 16.03.2021թ.-ին հայտարարված «ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 1 հատ հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման սարքավորումը, գումարը նշված է՝ 0 և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 42911160: www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի 16.03.2021.-ին հրապարակված 2021 թվականի գնումների պլանի համաձայն՝ Ընթացակարգով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով (42911160/504) ապրանքի համար նախատեսված քանակը նշվել է՝ 0, գումարը՝ 0: www.gnumner.am կայքում մինչև 16.03.2021թ.-ը առկա տվյալների համաձայն՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հրապարակված 2021 թվականի գնումների պլանի փոփոխության մեջ բացակայում է «ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկան՝ համապատասխանաբար սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով: «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի 2021 թվականի գնումների փոփոխված պլանում ներառվել է 12.05.2021թ.-ին, որը հրապարակվել է www.gnumner.am կայքում 17.05.2021թ.-ին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի

ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել և գնման գործընթացը սկսվել է առանց իրավական հիմքի, ինչի արդյունքում Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ գնման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Աքվա Ստանդարդ» ՍՊԸ-ի կողմից 15.07.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/64 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**